

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

<< 20 >> սեպտեմբերի 2019թ.

ք. Երևան

ՀՀ ոստիկանության ՆԱ վարչության ԾՔ բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ս.Բաղդասարյանս քննարկելով քաղաքացի Հրաչիկ Այվազյանի դիմումի կապակցությամբ սկսված ուսումնասիրության նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ՃՈ-ից ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում 2019թ. սեպտեմբերի 4-ին ստացվել է քաղաքացի Հրաչիկ Այվազյանի դիմումն այն մասին, որով բողոք է ներկայացնում ոստիկանության ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի 2-րդ սպայական դասակի տեսուչների դեմ՝ ոչ սթափ վիճակում մեքենա վարելու համար իրեն անհիմն վարչական տուգանգի ենթարկելու համար:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել բացատրություն վերցնել Հրաչիկ Այվազյանից:

Նկատի ունենալով, որ Հրաչիկ Այվազյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն լեզվին, ուստի նրանից բացատրություն վերցնելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրեցի <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Շահինյանը, ով ազատ տիրապետում է ռուսերեն, հայերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<<< ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարդուհի Շահինյանին ներգրավել որպես թարգմանիչ:
2. Վարդուհի Շահինյանին պարզաբանել <<<< ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները:

ՀԿՀ ավագ տեսուչ՝ 

Ս.Բաղդասարյան

Ծանոթացա՝ 

